Հավելված N 1
ՀՀ կառավարության 2012 թ.
դեկտեմբերի 20-ի նիստի N 51
արձանագրային որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական իրավիճակի բարելավման 2013 թվականի պետական ծրագիրը /այսուհետ՝ Ծրագիր/ բխում է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի հուլիսի 2-ի <<Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական քաղաքականության ռազմավարությունը և դրա իրականացումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին>> N 27 արձանագրային որոշման 3-րդ կետից:

2. Ծրագրի նպատակն է՝ իրականացվող միջոցառումների շնորհիվ ժողովրդագրական բացասական միտումների կանխումն ու իրավիճակի կայունացումը:

II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

3. Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ կազմում է շուրջ **3274.3** հազար մարդ, որից շուրջ 2096.0 հազարը՝ քաղաքային և 1178.3 հազարը՝ գյուղական: 2011թ. հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը 2011թ. տարեսկզբի նկատմամբ աճել է 11.7 հազ. մարդով, ինչը պայմանավորված է բնական հավելաճով: 2012 թ. հուլիսի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության ցուցանիշը կազմել է 3277.0 հազար մարդ՝ տարեսկզբի նկատմամբ աճելով շուրջ 2.7 հազար մարդով:

4. Հանրապետությունում 2011 թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին գրանցվել է 43.340 կենդանի ծնված, 1485-ով պակաս, քան 2010 թվականին: 2012 թ. հունվար-հունիսին ծնվածների թվաքանակը կազմել է 19183 մարդ, ինչը 2011թ. նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 812 ծնունդով կամ 4.1 տոկոսով (տես՝ գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Ծնունդների բաշխումն ըստ տարիների, 1990-2012 հունվար-հունիս, (մարդ)



5. Ծնելիության՝ դեռևս ցածր ցուցանիշը պայմանավորող գործոններից մեկը ամուսնությունների՝ դեռևս ոչ բավարար մակարդակն է: 2011թ. հունվար-դեկտեմբերին գրանցված ամուսնությունները 2010թ. հունվար-դեկտեմբերի համեմատ (17984) աճել են 1722-ով և կազմել 19706 դեպք, իսկ ամուսնալուծությունների դեպքերը աճել են 6.4%-ով կամ 191-ով և կազմել 3188 դեպք: 2012թ. հունվար-հունիս ամիսներին, 2011թ. նույն ժամանակաշրջանի համեմատ, նկատվել է ամուսնությունների թվաքանակի նվազում 147-ով (տես՝ գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Ամուսնությունները և ամուսնալուծությունները, 1990-2012 հունվար-հունիս, թվով



6. 2011 թվականին հանրապետությունում գրանցվել է մահվան 27963 դեպք, 2010 թվականի 27921-ի համեմատ, իսկ մահացության գործակիցը 1000 բնակչի հաշվով մնացել է անփոփոխ՝ 8.6: Մահացության պատճառական կառուցվածքում մահացության հիմնական պատճառներն են՝ արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (47.6 %),

դժբախտ պատահարներից, թունավորումներից և վնասվածքներից (4.8 %), նորագոյացություններից (19.8 %), մարսողական օրգանների հիվանդություններից (6.3 %), վարակիչ ու մակաբուծային հիվանդություններից (0.9 %): 2011 թվականի ընթացքում, 2010 թվականի համեմատ, նշված պատճառներից մահացությունների նվազում է գրանցվել միայն արյան շրջանառության համակարգի հիվանդություններից (1.3%-ով), մյուս պատճառների մասով գրանցվել է աննշան աճ: Ընդ որում, 2012թ. հունվար-հունիս ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ, մահացության դեպքերն աճել են 201-ով՝ կազմելով 14877 դեպք:

7. 2011 թվականի հունվար-դեկտեմբերին հանրապետությունում արձանագրվել է մինչև 1 տարեկան երեխաների մահացության 507 դեպք, 2010 թվականի 512-ի համեմատ: Մանկամահացության գործակիցը, 1000 կենդանի ծնվածի հաշվով կազմել է 11.6 պրոմիլ: Ընդ որում մինչև 1 տարեկան երեխաների մահվան դեպքերը կազմում են 0-4 տարեկան երեխաների մահացության դեպքերի՝ 594, շուրջ 85.3 %: 2012թ. հունվար-հունիս ամիսներին, 2011թ. նույն ժամանակահատվածի համեմատ մինչև 1 տարեկան երեխաների մահացության դեպքերը նվազել են 7-ով՝ կազմելով 241 դեպք:

8. Հղիության հետ կապված բարդություններից, ծննդյան և ետծննդյան ժամանակահատվածում, 2011 թվականին գրանցվել է մայրամահացության 6 դեպք, որով պայմանավորված մայրամահացության գործակիցը կազմել է 13.8՝ 100.000 կենդանի ծնվածի հաշվով՝ 2010 թվականի 9-ի դիմաց:

9. Բնական հավելաճի գործակիցը 2011 թվականին կազմել է 4.7 պրոմիլ (1000 բնակչի հաշվով), նախորդ տարվա 5.2 պրոմիլի համեմատ: 2012թ. հունվար- հունիս ամիսներին բնական հավելաճի ցուցանիշը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նույնպես նվազել է՝ 3.3-ից իջնելով 2.6 պրոմիլի՝ 1000 բնակչի հաշվով:

10. Հանրապետությունում տեղի ունեցող ժողովրդագրական գործընթացների վրա նշանակալի ազդեցություն ունի գործազրկության մակարդակը: Դիտարկելով հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակն ու կառուցվածքը, հարկ է փաստել, 2012 թվականի հունվարի 1-ի դրությամբ զբաղվածության գործակալության 10 մարզային և 41 տարածքային կենտրոններում հաշվառված աշխատանք փնտրող անձանց թվաքանակը կազմել է 81733 մարդ, իսկ գործազուրկների թիվը՝ 69440 մարդ, հանրապետությունում պաշտոնապես գրանցված գործազրկության մակարդակը

կազմել է 6.2 %: 2012թ.-ի հուլիսի 1-ի դրությամբ հաշվառված աշխատանք փնտրողների թվաքանակը կազմել է 77.0 հազար մարդ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազել է 12.8%-ով (88.3 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 5.8%-ով (81.7 հազ. մարդ): Աշխատանք փնտրողների թվաքանակում կանանց տեսակարար կշիռը կազմել է 68.6% (52.7 հազ. մարդ), երիտասարդների տեսակարար կշիռը՝ 24.4% (18.8 հազ. մարդ): Աշխատանք փնտրողների 84.5%-ը (65.1 հազ. մարդ) ստացել է գործազուրկի կարգավիճակ: Այս ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 12.1%-ով (74.1 հազ. մարդ), իսկ տարեսկզբի նկատմամբ՝ 6.2%-ով (69.4 հազ. մարդ):

Գծապատկեր 3. Պաշտոնապես գրանցված գործազրկությունը Հայաստանի Հանրապետությունում, /հազ. մարդ/



11. Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետության ժողովրդագրական լրջագույն մարտահրավերներից մեկը մնում է միջպետական միգրացիան: Տարբեր տարիներին անցկացված ընտրանքային հետազոտությունների արդյունքները ցույց են տալիս, որ, ի թիվս այլ պատճառների, միգրացիայի դրդապատճառներ են շարունակում հանդիսանալ աշխատատեղերի բացակայությունը և ցածր աշխատավարձը: Ճիշտ է, վերջին մի քանի տարիներին միգրացիոն բացասական մնացորդը դրսևորել է նվազման միտում /տես աղյուսակ 1/, այնուհանդերձ վիճակը հեռու է բավարար լինելուց, եթե հաշվի առնենք նաև այն հանգամանքը, որ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային անձնագրային բաժինների կողմից բնակչության հաշվառման և դուրսգրման տվյալները, ամբողջապես չեն արտացոլում միգրացիայի իրական ծավալները:

Աղյուսակ 1. Հայաստանի Հանրապետության միգրացիոն տեղաշարժերը (ներառյալ ներքին տեղաշարժերը), **2002-2011,** /մարդ/

Տարի	Եկողներ	Մեկնողներ	Մնացորդ
2002	9382	18594	-9212
2003	9827	17448	-7621
2004	9662	17375	-7713
2005	10441	18247	-7806
2006	9126	15844	-6718
2007	9795	16144	-6349
2008	10399	16282	-5883
2009	7961	11897	-3936
2010	7920	10288	-2368
2011	26639	30380	-3741

12. Միգրացիոն գործընթացների վերաբերյալ որոշակի պատկեր է ստեղծում նաև ուղևորափոխադրումների ծավալների ուսումնասիրությունը: Սկսած 1990 թվականից՝ ավելի քան մեկ տասնամյակ արձանագրված ուղևորափոխադրումների բացասական մնացորդը 2004-2006 թվականներին կայունացավ և վերածվեց դրականի: Սակայն, 2007 թվականից կրկին նկատվում է բացասական մնացորդ: 2009թ. համեմատ 2010թ. ուղևորափոխադրումների բացասական մնացորդը աճել է շուրջ 4.9 հազարով: ՀՀ սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգով՝ ՍԷԿՏ (ինչը հասու է դարձել 2010թ. տարեվերջին և 2011թ.-ից ամբողջությամբ անցում է կատարվել սահմանային հատումների գրանցումների առավել լիարժեք՝ քաղաքացիության, մուտքի և ելքի երկրի վերաբերյալ տեղեկություններ ապահովող՝ ՍԷԿՏ համակարգին) ստացված տվյալներով, սահմանային անցման կետերով իրականացվող արտաքին ուղևորաշրջանառության համախառն ծավալը 2011թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 3934.1 հազ., 2010թ.՝ 3555.1 հազ.ուղևորության համեմատ: Ուղևորափոխադրումների հաշվեկշիռը (ժամանումների և մեկնումների տարբերությունը) 2011թ. հունվար-դեկտեմբերին

կազմել է -43.8 հազ., 2010թ.-ին արձանագրված՝ -46.7 հազ. ուղևորության համեմատ: 2012թ. հունվար-հունիսին ուղևորափոխադրումների բացասական մնացորդը կազմել է -73874 նախորդ տարվա նույն ժամանակահատվածի -67278-ի համեմատ (տես՝ գծապատկեր 4): Հարկ է նշել, որ արձանագրված բացասական մնացորդի կտրուկ մեծացումը պայմանավորված է նաև դրա ստացման աղբյուրի փոփոխմամբ:

Գծապատկեր 4. Ուղևորափոխադրումների հաշվեկշիռն ըստ տարիների, 2000-2011 թ., (հազ. մարդ)



13. Արտաքին միգրացիոն հոսքերում ընդգրկված անձանց մեջ գերակշռում են աշխատանքային միգրանտները: Ինչպես վերջին երկու տասնամյակում, այնպես էլ ներկայումս, միգրացիոն հիմնական ուղղությունը Հայաստանի Հանրապետությունից ուղղված է դեպի Ռուսաստանի Դաշնություն, ԱՊՀ այլ երկրներ և ԱՄՆ: Արտաքին միգրացիայի բացասական ազդեցությունը վերարտադրողական տարիքի անձանց, մասնավորաբար տղամարդկանց, տևական բացակայությունն է ընտանիքներից, որն ուղղակիորեն ազդում է հատկապես բնակչության վերարտադրողական վարքագծի վրա: Այդ հանգամանքով պայմանավորված, անբարենպաստ փոփոխությունների են ենթարկվում հանրապետության բնակչության սեռատարիքային համամասնությունները: Ընդ որում, բավարար երաշխիքներ չկան, որ արտերկրում կուտակվող աշխատանքային միգրանտների որոշակի մասն ի վերջո չի մնա մշտական բնակության և, տանելով ընտանիքը, չի խաթարի արտաքին միգրացիոն գործընթացների հարաբերական կայունությունը:

III. ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

14. Հաշվի առնելով 2011 թվականին, ինչպես նաև 2012 թ. հունվար-հունիս ամիսներին հանրապետությունում տեղի ունեցած ժողովրդագրական զարգացումների միտումները, ինչպես նաև ժողովրդագրական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները, դրանց իրականացման կոնկրետ առաջադրանքներն ու միջոցները, սահմանվել են Ծրագրի հիմնական խնդիրները: Դրանք են՝

1) ծնունդների աճի ապահովումը, երեխայի, հատկապես երրորդ և հաջորդ, ծննդյան, նյութական խրախուսման,

2) մանկամահացության և մայրամահացության ցուցանիշի բարելավումը՝ մանկամահացության և մայրամահացության դեպքերի նվազեցման միջոցով,

3) վաղաժամ մահացությունների թվաքանակի նվազեցումը,

4) երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդման միջոցով բնակչության ամուսնական կառուցվածքի աստիճանական բարելավումը,

5) ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործումը,

6) միգրացիոն գործընթացների կարգավորումը և բնակչության տարածքային տեղաբաշխման անհամաչափության մեղմումը:

15. Ընտանիքում ընդլայնված վերարտադրության ապահովման նպատակով <<Պետական նպաստների մասին>> ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 3.2 կետով յուրաքանչյուր երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան տարբերակված մոտեցմամբ 2009-2010թթ. հաջողվեց ծնելիության գումարային գործակիցը մեկ կնոջ հաշվով հասցնել 1.6-ի: Սակայն, 2011 թ, 2010 թ. համեմատ, ծնունդների կրճատումը (գծապատկեր 1) բերեց նաև երրորդ և հաջորդ ծնունդների կրճատմանը՝ 6990-ից հասնելով 6619-ի, իսկ ծնելիության գումարային գործակիցը հասավ 1.5-ի: 2013թ. կշարունակվի երրորդ և հաջորդ երեխայի ծննդյան նյութական խրախուսման տարբերակված մոտեցումը՝ միանվագ նպաստի չափը պահպանելով 430.000 դրամ:

16. Ծրագրի հաջորդ ուղղությունը կլինի մանկամահացության և մայրամահացության ցուցանիշի բարելավումը: 2008 թվականից հանրապետությունում ներդրվեց <<Ծննդօգնության պետական հավաստագիր>> նպատակային ծրագիրը, որով ծննդօգնությունը դարձավ անվճար, զգալիորեն աճեց նախածննդյան գոնե մեկ այց կատարած հղիների ցուցանիշը՝ 99%, իսկ ստացիոնար ծննդաբերությունների ցուցանիշը

հասավ 99.4%: Ծննդօգնության պետական հավաստագրի տրամաբանական շարունակությունը դարձավ 2011թ. հունվարի 1-ից ներդրված 0-7 տարեկան երեխաների հավաստագրի համակարգի ներդրումը, որը զգալիորեն բարելավվեց նորածնային և վաղ հասակի երեխաների բժշկական սպասարկման ծառայությունների որակն ու մատչելիությունը:

17. Բնական հավելաճի ապահովումն անհնար է առանց մահացության, հատկապես վաղաժամ մահացությունների կրճատման, որն էլ կհանդիսանա Ծրագրի մյուս ուղղությունը:

18. Հաշվի առնելով ամուսնությունների ոչ բավարար մակարդակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ նյութական, բնակարանային, կենցաղային պայմանները դառնում են ամուսնության ժամկետի հետաձգումը, դրանից հրաժարման և ամուսնալուծության պատճառ, կարևորվում է երիտասարդ ընտանիքների ձևավորման գործընթացների վրա նպատակային ներազդումը, որը կիրականացվի ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N 98-Ն որոշմամբ հաստատված «Երիտասարդ ընտանիքին՝ մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի միջոցով:

19. Ժողովրդագրական արդի փոփոխությունները մշտապես առաջացնում են ժողովրդագրական զարգացմանն առնչվող իրավական դաշտի կատարելագործման անհրաժեշտություն: Այդ տեսանկյունից զգալի նշանակություն կունենա բազմազավակ ընտանիքի կարգավիճակի և սոցիալական երաշխիքների սահմանումը՝ <<Հայաստանի Հանրապետությունում բազմազավակ ընտանիքների աջակցության պետական ծրագրին և ծրագրի իրականացումն ապահովող միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին>> ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագծի շրջանակներում, որն էլ կհանդիսանա Ծրագրի հաջորդ կարևորագույն ուղղությունը:

IV. ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

20. Ծրագրով նախատեսված միջոցառումները և ակնկալվող արդյունքները ներկայացված են N 2 հավելվածում: